ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԻԼԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Սույն թվականի մայիսի 8-ին Իտալիայում պաշտոնական այցելությամբ գտնվող Իրանի Իսլամական Հանրապետության նախկին նախագահ Այաթոլլահ Մուհամմադ Խաթամին հյուրընկալվեց Իտալիո հայ համայնքի կողմից՝ գլխավորությամբ Իտալիո հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վարդապետ Շահենյանի: Հանդիպումը տեղի ունեցավ Միլանի Հայ Տանը, որին ներկա էին նաև Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Ռուբեն Շուգարյանը, Իտալիայում և Վատիկանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանը, Միլանի քաղաքապետարանի ներկայացուցիչը, Իտալիո հայոց միության և հայ միութենական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ, ովքեր իրենց ողջույնի խոսքերն ուղղեցին Այաթոլլահ Մուհամմադ Խաթամիին:

Իտալիո հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վարդապետը, հանուն համայնքի անդամների բարի գալուստ մաղթելով և այցելության համար շնորհակալություն հայտնելով Այաթոլլահ Մուհամմադ Խաթամիին, կարևորեց Իրանի և հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդմանն ի խնդիր նրա ծավալած գործունեությունը և Մուհամմադ Խաթամիին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի բարեմաղթանքներն ու ջերմ ողջույնները:

Հանդիպման ավարտին Այաթոլլահ Մուհամմադ Խաթամին իր շնորհակալական խոսքում անդրադառնալով երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը՝ մասնավորապես շեշտեց, որ «քրիստոնյա հայ ժողովուրդը, միշտ հավատարիմ մնալով իր ազգին ու իր Եկեղեցուն, օրինապահ քաղաքացի է եղել աշխարհի տարբեր երկրներում, որի վառ ապացույցն է և Իրանի հայ համայնքը»:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԻ ԵՎ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՄԻԼԱՆԻ ՍՐԲՈՑ ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Միլան, 13 մայիսի 2007 թ.)

Սույն թվականի մայիսի 13-ը Իտալիո հայ համայնքում նշանավորվեց գեղեցիկ իրադարձությամբ:

Միլանի Սրբոց Քառասուն Մանկանց եկեղեցում, հընթացս Սուրբ Պատարագի, որին ներկա էին նաև Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Ռուբեն Շուգարյանը, Վենետիկի Մխիթարյան միաբանության ներկայացուցիչ Հայր Վահան Օհանյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը, Իտալիո հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վարդապետ Շահենյանը, տիկին Սոնա Իրիշյանին հանձնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Օրհնության գիրը, իսկ տիկին Ջինա Սերապյանին և տիկին Մարի Մենդիկյանին՝ երկարամյա ազգանվեր ու նվիրյալ գործունեության համար Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Ներ-

սես Շնորհալի» շքանշաններ՝ ի պայծառություն և ի բարօրություն Հայ Եկեղեցու և Իտալիո հայ համայնքի:

Ինչպես հոգեշնորհ Հայր Սուրբն իր քարոզի մեջ նշեց, պատահական չէր ընտրված օրը, որն, ըստ Իտալիո պետական օրացույցի, Մայրերի տոնն է, քանի որ «հավատավոր այս տիկնայք, Աստվածամոր օրինակին հետևելով, իրենց եկեղեցանվեր գործունեության մեջ մայրական գորով ու նվիրում են դրել»:

Հավարտ Ս. Պատարագի սրբազան արարողության, եկեղեցու «Մարթա Դիարբեքիրյան» սրահում տեղի ունեցած մեծարման միջոցառմանը մեծազնիվ տիկնանց ազգասեր ու եկեղեցասեր նվիրյալ գործունեությանը իրենց գնահատանքի խոսքերն ուղղեցին դեսպան տիար Ռուբեն Շուգարյանը և Միլանի համայնքի հոգաբարձուների խորհրդի ատենապետ տիար Սարո Խուդավերդյանը:

Միջոցառումն իրենց երգակցությամբ զարդարեց նաև եկեղեցու «Նորահրաշ» դպրաց դասը:

Տ. ԱՌԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՀԵՆՅԱՆԻ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՌՈՄՈՒՄ

(Հռոմ, 23 մայիսի 2007 թ.)

Սույն թվականի մայիսի 22-ին Հռոմի Պապական Արևելյան Ինստիտուտում տեղի ունեցավ Իտալիո հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վարդապետ Շահենյանի դոկտորական թեզի պաշտպանությունը:

Հոգեշնորհ Հայր Սուրբը պաշտպանության էր ներկայացրել «Հայ Առաքելական Եկեղեցու ժամերգությունները Բյուզանդական Եկեղեցու ժամերգությունների հետ զուգահեռում» թեզը, որի գիտական ղեկավարն էր Հայր Լևոն-Պողոս Զեքիյանը: Ընդդիմախոսներն էին՝ բյուզանդական ծեսի մասնագետ պրոֆեսոր Յակով Կուլիչը և արևելյան ծեսի մասնագետ պրոֆեսոր Հաուքս Տիփլիս Ստիվենը: Քննիչ հանձնաժողովի նախագահն էր ծիսագիտության ֆակուլտետի դեկան Էդուարդո Ֆարուջջան:

Պաշտպանությանը ներկա էին Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Ռուբեն Շուգարյանը, Կաթոլիկ Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների կենտրոնի ներկայացուցիչ մոնսինյոր Յոհաննես Բոննին, համալսարանական ուսանողներ և Իտալիո հայ համայնքի անդամներ:

Հետ պաշտպանության հանձնաժողովի նախագահը հայտնեց, որ աշխատանքը գնահատվում է «գերազանց» և առաջիկայում պետք է հրատարակվի: Հոգեշնորհ Հայր Սուրբին շնորհվեց Արևելյան Եկեղեցագիտության դոկտորի աստիճան:

ԴԻՎԱՆ ԻՏԱԼԻՈ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅԱՆ